ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ «ՊԱՐՈՂՆԵՐ» ՔԱՆԴԱԿԱՇԱՐԸ

Նարե Նադարյան

Արվեստագիտության թեկնածու
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ՀՀ, Երևան, Տերյան 105
Էլ. հասցե՝ nare-nadaryan@mail.ru
ORCID: 0009-0003-1401-0656
Հոդվածը ներկայացվել է 20.06.2023, գրախոսվել է 20.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-218

Ամփոփում

ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը «Պարողներ» քանդակաշարում ներկայացրել է հասարակ մարդկանց՝ նրանց առօրյայից վերցնելով իր քանդակի նյութն ու շունչը:

Բիրմացի, հնդիկ, չինացի, ինչպես նաև հայ պարողների կերպարներում առկա է թատերայնություն: «Պարողներ» շարքի սյուժեն պարզ է, սակայն Իսկանդարյանին համակած զգացմունքի խորությունը մեզ իրավունք է տալիս խոսելու նաև առկայծող խնդության, պատանեկության ու հույզի մասին: Կերպարները ենթարկված են իրենց պարի շարժումներին: Պարողների ճկունությունը, նազելիությունը գրավում է, դյուրթում, համակում տոնական տրամադրությամբ: Քանդակագործը կարողացել է ստույգ գտնել պարողների ձեռքերի և մարմինների շարժումները: Ու թեև պարողները երիտասարդ են և կենսախինդ, բայց նրանց մեջ էլ զգում ես այն անհանգստությունը, պատասխանատվությունը, որը բնորոշ է ելույթի, համերգի մասնակիցներին:

Բանալի բառեր՝ նկարիչ, քանդակագործ, «Պարողներ» շարք, բիրմացի, հնդիկ, չինացի, հայ:

Ներածություն

2023 թվականի հունվարի 13-ին լրացավ ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի ծննդյան 100-ամյակը:

Խաչատուր Իսկանդարյանը (1923-2015 թթ.) ստեղծել է գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական, մոնումենտալ և մոնումենտալ-դեկորատիվ աշխատանքներ: Սակայն նա նախապատվությունը տվել է հաստոցային քանդակին և մանր պլաստիկային, որտեղ էլ դրսևորվել է տաղանդաշատ արվեստագետի վարպետությունն ու գեղարվեստական աշխարհազգացողությունը:

«Իմ լավագույն ընկերն ու բարեկամը՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը, Երևանում ցուցադրել էր իր մանրաքանդակներից մի քանիսը, որոնք չափազանց դուր եկան ինձ, և ես սկսեցի զբաղվել մանրաքանդակներով:

Նկ 1. Հայկական պար, 1957, բրոնզ, 41x18x16

Նկ 2. Բիրմական պար, 1957, բրոնզ, 46x18x21

Նկ 3. Հնդկական պար, 1957, բրոնզ, 41x18x16

Նկ 4. Չինական պար, 1957, բրոնզ, 41x18x1

Առհասարակ ես Նիկողոսյանից շատ բան եմ սովորել», - խոստովանել է Իսկանդարյանը[1]:

Կյանքը և գործունեությունը

Վարպետը ծնվել է Երևանում: 1937 թ. ընդունվել է Ղուկաս Ղուկասյանի անվան պիոներների պալատի քանդակի բաժինը և աշակերտել քանդակագործ Սամվել Մանասյանին: Ուսումնառության ընթացքում ընդլայնվում է Խ. Իսկանդարյանի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը և քանդակի բաժինն ավարտելուց հետո ընդունվում Երևանի գեղարվեստական ուսումնարանի գեղանկարի բաժին, իսկ 1951 թ. ավարտում է Երևանի գեղարվեստի ինստիտուտի քանդակի բաժինը՝ անվանի քանդակագործ Սուրեն Ստեփանյանի ղեկավարությամբ:

Ուսումնառության տարիներին նա ծանոթանում է եվրոպական դասական արվեստին, ստանում ակադեմիական լուրջ կրթություն, ձեռք բերում մասնագիտական փորձառություն, որը նպաստում է նրա գեղարվեստական հայացքների և տեխնիկական հմտությունների ձևավորմանը:

Երկարամյա ստեղծագործական կյանքի ընթացքում քանդակագործը մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, մրցույթների, արժանացել մրցանակների ու պարգևների: Սակայն Իսկանդարյանն իր առաջին լուրջ հաջողությունն արձանագրել է «Պարողներ» շարքով (1957 թ.): Այս շարքի համար քանդակագործն արժանացել է Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնի դափնեկրի կոչման և ոսկե մեդալի[2]:

Ի դեպ, վարպետը ստեղծել է թեմատիկայով, ոճով մեկ ամբողջություն կազմող տարբեր քանդակաշարեր՝ «Հին Ուզբեկստան», «Ճապոնիա», «Գիքոր», «Քաջ Նազար», «Հուշեր հին Երևանից»՝ հիշողությամբ արված մանրաքանդակները:

«Պարողներ» քանդակաշարը

«Պարողներ» քանդակաշարում դիտողի աչքի առաջ կենդանանում են տարբեր ազգերի մարդիկ՝ պարի տարերքի մեջ: Իրապաշտության վրա հիմնված կերպարներն աչքի են ընկնում շարժուձևերի բնականությամբ, դեմքերի կենդանի արտահայտությամբ, լուսաստվերային խաղով, շերտավոր զգեստների տակից թափանցող մարմինների բարեկազմությամբ:

«Պարողներ» շարքի սյուժեն պարզ է: Քանդակագործը կարողացել է ստույգ արտահայտել ձեռքերի և մարմինների շարժումները: Ու թեև երիտասարդ են և կենսախինդ, նրանց մեջ էլ զգում ես ելույթի, համերգի մասնակցին բնորոշ անհանգստությունը, պատասխանատվությունը: Այստեղ Իս-

[1] Փիլոսյան 2003:
[2] Փիլոսյան 2010, 8:

կանդարյանին հուզում են և՛ բնորդի հոգեբանական ապրումները, և՛ պարի մեջ քարացած մարմնի զուտ արտաքին, գեղարվեստական և բնական ներդաշնակությունը: Պարողների անհատականացված դիմագծերը որոշակի են, իսկ նրանց դիմախաղը, ներքին տրամադրությունը, արտաքին դիմաշարժությունը թողնում են կենդանի ու անմիջական տպավորություն:

Այսպես, Հայաստանի ազգային պատկերասրահում է գտնվում Իսկանդարյանի «Հայկական պար» փոքրաչափ, բրոնզածույլ ֆիգուրը (նկ. 1, 41x18x16): Կոմպոզիցիոն ինքնատիպ լուծումով, կատարման վարպետությամբ աչքի ընկնող քանդակում ներկայացված է ազգային տարազով պարուհի: Վերջինս պճղնավոր և առջևից կտրվածքներով զգեստ է կրում: Կնոջ իրանին գեղազարդ գոտի է, ձեռքերին դաստառակներ են, իսկ գլխին ծածկված քողով ճակատակալ է: Պարուհին չի նայում դիտողին, նրա աչքերը փակ են, որն արտահայտիչ է դարձնում ֆիգուրի զգայական հոգեվիճակը:

Ինչպես, «Հայկական պար» քանդակում, այնպես էլ «Բիրմական պար» աշխատանքում (նկ. 2, բրոնզ, 46x18x21) Իսկանդարյանը առանձնակի ուշադրություն է դարձրել կերպարի տարազին: «Բիրմական պար» քանդակում պատկերված է գլխի կիսաթեք շարժումով մի կին, որը ձեռքում պահված հովհարի օգնությամբ կարծես անշտապ փորձում է ուղղել գլխի կիսաթեք դիրքը: Հովհարի մոտից ներքև ուղղված աչքերը պարուհու կերպարն է՛լ ավելի կենդանի ու գրավիչ են դարձնում: «Բիրմական պար»-ում տեսնում ենք ալիքանման կորություններ ունեցող երկար զգեստ, որի վրա առկա են ծաղկազարդ նախշեր: Պարուհու կերպարում կարևորվել է նաև բարձր հավաքված սանրվածքը, որը կարծես տարազի բաղկացուցիչ մասն է: Կնոջ շարժումներն ավելի արտահայտիչ ու պլաստիկ են՝ շնորհիվ նրա հանդերձանքի վրա առկա լուսաստվերային խաղի՝ պայմանավորված նրբագծային անցումներով և սահուն ուրվագծերով:

Այստեղ պատեհ է ներկայացնել ուշագրավ մի իրողություն. «Բիրմական պարը» Հասմիկ Փիլիպոսյանի «Հայկական քանդակագործություն» պատկերագրքում վրիպակի հետևանքով ներկայացված է որպես ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Մանասյանի աշխատանք: Քանդակը կոչվում է «Չին դերասանուհին» և 1957-ի փոխարեն թվագրված է 1953-ով[3]: Մեր դիտարկումը հիմնավորելու համար նշենք, որ դեռևս նկարչի կենդանության օրոք՝ 2010-ին, հրատարակվել է Խ. Իսկանդարյանի կյանքի և արվեստի վերաբերյալ պատկերազարդ ալբոմ, որը կազմել է արվեստաբան Սյուզաննա Փիլոսյանը: Ալբոմում տեղ են գտել արվեստագետի քանդակագործական, գեղանկարչական և գրաֆիկական հիմնական գործերը, «Բիր-

[3] Փիլիպոսյան 2004, 53:

մական պար» աշխատանքը[4]: Ինչպես նաև 1967-ին Երևանում տեղի ունեցած Իսկանդարյանի անհատական ցուցահանդեսի առթիվ Հայաստանի կերպարվեստագետների միությունը հրատարակել է արվեստագետի ստեղծագործությունների կատալոգը՝ Մարիամ Այվազյանի հեղինակած առաջաբանով[5], որտեղ արվեստաբանը համառոտ բնութագրել է Խ. Իսկանդարյանի արվեստը և նկարացանկում հիշատակել «Բիրմական պար»-ը: Վերջինս պահպանվում է Հայաստանի ազգային պատկերասրահում՝ որպես Խաչատուր Իսկանդարյանի աշխատանք: Ի լրումն՝ 2023 թ. հունիսի 1-ից «Բիրմական պար» աշխատանքը ցուցադրվում է Հայաստանի ազգային պատկերասրահում բացված «Խաչատուր Իսկանդարյան – 100. Քանդակագործը և քաղաքը» ժամանակավոր ցուցահանդեսում:

Փոքրաչափ, մանրածավալ քանդակները սովորաբար ունեն մանրակրկիտ մշակում, ինչը ոչ միշտ ենք տեսնում Իսկանդարյանի ստեղծագործություններում. հաճախ վարպետի ստեղծած քանդակների ծեփվածքը մոտենում է իմպրեսիոնիստ քանդակագործների կիրառած՝ այսպես կոչված «երփնագրային ծեփվածքին»: Թվում է, թե այդ հյութեղ ծեփվածքներով ստեղծված աշխատանքները պետք է զուրկ լինեն կոնկրետությունից, սակայն դա այդպես չէ. աշխատանքներում քանդակագործն ամեն մեկի դեմքի մեջ բնավորության ինքնահատուկ գծեր է նշմարել:

Ասվածի լավագույն օրինակներից է «Հնդկական պար» աշխատանքը (նկ. 3, բրոնզ, 41x18x16): Քանդակն աչքի է ընկնում իր կորային անցումներով, որոնք լույսի ազդեցության ներքո մարմինը դարձնում են ավելի իրապաշտական:

Ավելորդ չէ հիշատակել, որ Իսկանդարյանը Մոսկվայի Երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոնին ոսկե մեդալի է արժանացել «Հնդկական պար» աշխատանքի համար: Այն գնել է Մոսկվայի երիտասարդական ֆոնդը[6]:

Հնդկական պարերն ամենամիստիկական պարերն են համարվում ամբողջ աշխարհի պարարվեստում: Իսկանդարյանը, քաջ գիտակցելով, որ հնդկական պարերում պարուհիները պատմում են պատմությունը միայն ժեստերի միջոցով, մեծամասնությամբ ներկայացնելով հնդկական դիցաբանությունը, տվյալ տարածաշրջանի մշակույթն ու ոգին, ստեղծել է մի կնոջ կերպար, որի կեցվածքում առկա է ձեռքերի հանդիսավոր մի շարժում. երկու կողմից իրար մոտեցող ձեռքերը, թվում է, ամեն վայրկյան կարող են թե՛ բացվել և կանչել գրկախառնության, թե՛ փակվել՝ ավարտելով ներկայացումը: Պարուհու փոքր-ինչ ծալված ծնկները, թեքված ազդրերը, ներս

[4] Փիլոսյան 2010, 160:
[5] Այվազյան 1967, 55:
[6] Վարդանյան 1967:

ընկած որովայնը կորություն են տալիս կերպարի կառուցվածքին: Ֆիգուրի ոտքերը բոկոտն են, որը կարևոր հանգամանք էր հնդկական պարերի ժամանակ: Եվ թեև կերպարը, ինչպես արդեն վերը նշեցինք, մանրակրկիտ մշակված չէ, արվեստագետը, այնուամենայնիվ, ուշադրություն է դարձրել հնդկուհու արդուզարդին. նա ներկայացված է ականջօղերով, թևնոցներով, զարդանախշ գոտիով: Սրանք ունեն գեղագիտական և էրոտիկ նշանակություններ, որոնք շատ կարևոր դեր են խաղացել տարազի համալիրում՝ հիմնականում միտում ունենալով գրավել հակառակ սեռի ուշադրությունը: Աշխատանքի ինքնօրինակությունը ձեռք է բերվել ճկուն մարմնի շնորհիվ: Գծային-երկրաչափական լուծումն այստեղ արդարացվում է կոմպոզիցիային գալարաձև զարգացում տալու ձգտումով: Այսինքն՝ արվեստագետի նպատակն է արտահայտել պարի էությունը, ստեղծել պարի զգացողություն և ոչ թե նատուրալիստորեն վավերացնել պարուհու քարացած դիրքը:

Քանդակագործը բոլորովին այլ խնդիր է դնում իր առջև «Չինական պար» քանդակում (նկ. 4, բրոնզ, 41x18x1, գտնվում է վարպետի արվեստանոցում): Պատկերված է մի տղա, որը և՛ պարում է (դա տեսնում ենք նրա մի ոտքը բարձրացրած ու կողքի թեքած դիրքում), և՛ նվագում է հարվածային երաժշտական գործիքի վրա: Ռիթմը, որը թելադրված է թմբուկի միօրինակ երաժշտական շեշտադրումներով, հնարավոր է դարձնում ցուցադրել պարողի կշռադատված ու նրբագեղ արտահայտչականությամբ օժտված շարժումը: Ֆիգուրի աչքերը փակ են, որն արտահայտիչ է դարձնում նրա զգայական հոգեվիճակը: Տղամարդը որոշակիորեն թեքված է դեպի իր երաժշտական գործիքը: Կերպարը ներկայացված է լայն տաբատով, իսկ գոտկատեղից վերև մերկ է, առանց ծածկույթի, որի օգնությամբ տեսնում ենք ատլետիկ կազմվածքով մի մարմին: Հետաքրքիր են ֆիգուրի հետ սանրված մազերը, որի շնորհիվ հստակ երևում է դեմքի մանրամասն պատկերումը. կիսախուփ աչքեր, փոքր-ինչ հավաքված հոնքեր, լայն ճակատ, որոնք ներշնչանք են արտահայտում: Այս աշխատանքի մասին արվեստաբան Ռուբեն Դրամբյանը «Երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը» հոդվածում գրել է. «Իսկանդարյանը վարակիչ հումորով է ստեղծել թմբկահար տղայի փոքր ֆիգուրը: Հետաքրքիր է հղացված նաև տարբեր ազգությունների պարուհիների շարքը…»[7]:

Եզրակացություններ

Շարժվող մարմինն ընկալվում է այլ կերպ, քան անշարժը, և այստեղ հարկավոր է առանձին տարրերի յուրատեսակ կապակցում: Թվում է՝ պարը պետք է փայլեր միայն ձևի գեղեցկությամբ, բայց այդպես քանդակները

[7] Դրամբյան 1957, 16-20:

կլինեին զուտ ձևերի ուսումնասիրություններ: Կենդանի մարմինների ձևերը կրկնելու և միաժամանակ չիդեալականացնելու մեջ է քանդակաշարի գրավչությունը:

Ինչպես տեսանք, քանդակաշարն աչքի է ընկնում պարուհիների և պարողի կենդանի, դինամիկ շարժումով: Բիրմացի, հնդիկ, չինացի, ինչպես նաև հայ պարողների կերպարներում առկա է թատերայնություն: Պարողներից ամեն մեկը կարծես «Իմ երկրի կյանքը» ներկայացման մի փոքրիկ տեսարան է ցուցադրում՝ կերպարային ընդգծվածությամբ և կոլորիտով:

Օգտագործված գրականություն

Այվազյան Մ. 1967, Խաչատուր Իսկանդարյան: Կատալոգ, Երևան, «Հայաստանի կերպարվեստագետների միություն», 55 էջ:

Դրամբյան Ռ. 1957, Երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը, «Սովետական արվեստ», Երևան, N 5, էջ 16-20:

Վարդանյան Ա. 1967, Երկու հետաքրքիր ցուցահանդես, «Հայրենիքի ձայն», Երևան, 5, մարտի:

Փիլոսյան Ս. 2010, ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա, Ալբոմ, Երևան, «Վան Արյան», 160 էջ:

Փիլոսյան Ս. 2003, Խաչատուր Իսկանդարյան / «Համայնապատկեր», Երևան, 22 հունվարի:

Փիլիպոսյան Հ. 2004, Հայկական քանդակագործություն, Երևան, «Հայաստանի ազգային պատկերասրահ», 53 էջ:

СЕРИЯ СКУЛЬПТУР ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА «ТАНЦОРЫ»

Наре Надарян

Резюме

Хачатур Искандарян изображал обычных людей, черпая сюжеты и образы своих произведений из повседневной жизни.

Для этих композиций характерна однофигурность. Бирманские, индийские, китайские, а также армянские танцоры обладают чувством театральности. Скульптор смог точно найти движения рук и тел танцоров. Работы скульптора отличаются экспрессией, естественностью движений, композиционно-пространственным свободным расположением. Они являются своеобразными пластическими историями, в которых представлены характерные для людей позы, экспрессивные движения. Выполненные с использованием различных приемов пластики, скульптуры не только обладают особым очарованием, но и заключают в себе этнографическую информацию.

Х. Искандарян занимает достойное место в ряду скульпторов, занимающихся армянской миниатюрной пластикой. Его творческое наследие является неотъемлемой частью армянского искусства.

Ключевые слова – художник, скульптор, серия «Танцоры», бирманцы, индийцы, китайцы, армяне.

KHACHATUR ISKANDARYAN'S "THE DANCERS" SCULPTURAL SERIES

Nare Nadaryan

Abstract

The sculpture of Khachatur Iskandatyan created characters of ordinary people, taking the scenarios and the spirit of his sculptures from everyday life.

These compositions are characterized as single-figures. Burmese, Indian, Chinese as well as Armenian dancers have a sense of theatricality. The sculptor was able to accurately find the movements of the hands and bodies of the dancers. The works with their content are available for the viewer, are remarkable with sensuality, naturalness of movements, composite-space free layout. They are specific plastic stories, in which the described typical positions of people, expressive features and speaking, expressive movements are full of live naturalness. These works attract by their emotion, and with all the depth of content. Executed with use of different techniques of plasticity, these works not only have a deep charm, but also encompass ethnographic information.

Iskandaryan takes his place of honor among a number of sculptors who are engaged in Armenian miniature plastic arts. His inheritance is an integral part of Armenian art.

Key words – painter, sculptor, "The Dancers" series, Burmese, Indian, Chinese, Armenian.